Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-05570000

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ

<<ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ>> ՓԲԸ-Ի

ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վահե Հակոբյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և Սյունիքի մարզի <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր >> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), (լիցենզիա N Կ-ԲՕ-001949, տրված 16.05.2014թ.), ի դեմս տնօրեն Արարատ Վարդանյանի, որը գործում է <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Կատարողն իրավունք ունի.**

2.1.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան մատուցված պատշաճ ծավալի և որակի Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. Հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում կազմակերպվող վերահսկմանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. **Կատարողը պարտավոր է.**

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ամբողջ ծավալով՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և ՀՀ առողջապահության նախարարի անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ներկայացնել Բուժօգնության աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 6-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, այդ թվում հավելված 2-ով նշված ծախսային ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրությունների և հարկային հաշիվների կազմում և ներկայացում, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ այլ հաշվետվություններ և տեղեկանքներ՝ համաձայն սույն պայմանագրի 4-րդ հավելվածի,

2.2.3. պետական բյուջեի համապատասխան ծրագրերի շրջանակներում հիվանդանոցային Բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ որոշում կայացնել՝ առաջնորդվելով Պատվիրատուի կողմից հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության շրջանակներում անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների» կողմնորոշիչ ցանկով (սույն դրույթը տարածվում է միայն հիվանդանոցային ձևով Բուժօգնություն տրամադրող Կատարողի նկատմամբ),

2.2.4. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.5. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում:

2.2.6.ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի մասին, ինչպես նաև ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունվարի 21–ի N 70-Ա հրամանի պահանջներին համապատասխանող ինտերնետային կայք էջի առկայությունը, պահպանումը և պարբերական թարմացումը,

2.2.7. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու հետ կնքել վճարովի կամ համավճարային հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր՝ համաձայն ՀՀ իրավական ակտերով սահմանված օրինակելի ձևերի,

2.2.8. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը քաղաքացիներին՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.9. ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով կազմակերպել բուժաշխատողների մասնագիտական կատարելագործումը,

2.2.10. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

1) աշխատավարձ,

2) հարկային պարտավորություններ,

3) դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

4) այլ ծախսեր,

2.2.11. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.12. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը համապատասխան հաշվետվական-տեղեկատվական համակարգերում և արժանահավատ հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակների ներկայացումը Պատվիրատուին՝ սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել տեղեկատվական համակարգի սպասարկումը սեփական միջոցներով՝ հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակների անխափան ներկայացման նպատակով,

2.2.13. ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում էլ-առողջապահական համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.14. սույն պայմանագրի կնքումից հետո 40-օրյա ժամկետում ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինպես նաև էլ-առողջապահական համակարգից օգտվող վարչա-տնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայություն,

2.2.15 ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովել էլ-առողջապահական համակարգից ստացվող տեղեկատվության գաղտնիությունը,

2.2.16. ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկության և արժանահավատության համար պատասխանատու է Կատարողը,

2.2.17. նախքան դեղերի և բժշկական պարագաների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,

2.2.18. հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների

համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,

2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,

2.2.20. Պատվիրատուի կողմից վերահսկում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել Պատվիրատուի վերահսկում իրականացնող մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,

2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 5-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,

2.2.22. կատարել Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.2.23. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. Ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել Կատարողի կողմից հաշվետվություններով ներկայացված Բուժօգնության ծավալները, եթե Կատարողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն մատուցվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի Բուժօգնություն,

2.3.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում.

1)առաջարկել համապատասխան իրավասու անձին Կատարողի նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր,

2)կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և պատասխանատվության այլ միջոցներ,

3) միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.3. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15 օրվա ընթացքում քննարկել Կատարողի եռամսյակային գործունեության արդյունքները՝ Բուժօգնության որակը, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված դրույթների կատարումը, «թեժ գծի» միջոցով կամ այլ աղբյուրներից ստացված բողոք-դիմումները, ոչ պաշտոնական վճարումների կատարման հաստատված դեպքերը, և ելնելով քննարկման արդյունքներից՝ ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.4. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով.

2.3.5.սույն պայմանագրի համաձայն, ստուգել (վերահսկել) Կատարողի կողմից բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքը, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալները, որակը, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատությունը և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտությունը և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և պահպանումը, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.6. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

2.3.7. պայմանագրով նախատեսված աշխատանքների վերահսկման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.8. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,

2.3.9. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.3.10 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,
բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,
2.3.11 Իր կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան իրականացնել Կատարողի բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատում և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ Կատարողին՝ աշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման, ինչպես նաև աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ.

2.4. **Պատվիրատուն պարտավոր է.**
2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,
2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, Կատարողի կողմից սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետների պահպանման պայմանով,
2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,
2.4.4. կատարել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
2.4.5 գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ,
2.4.6 պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի արդյունքը չընդունելու կամ չմերժելու դեպքում, պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողին տրամադրել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը):
2.4.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի

հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է.
3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2227-Ա հրամանով հաստատված կարգով,
3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական պարագաների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև.
4.2.1. եթե Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ սույն պայմանագրի հավելված 4-ով նախատեսված հաշվետվություններում հայտնաբերված ոչ պատշաճ կամ ոչ արժանահավատ տեղեկություններ պարունակող հաշվետվությունների թիվը ամսական կտրվածքով կազմում է յուրաքանչյուր ձևին համապատասխան ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,
4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ամբողջությամբ կամ մասնակի չտրամադրելը և/կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում:
4.3. Սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում

ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով՝ անկախ սույն պայմանագրի հավելված 3-ով սահմանվող տուժանքների կիրառումից:
4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով լրացուցիչ պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար:
4.6. Սույն պայմանագրի շրջանակում ներկայացված հաշվետվությունների ստուգմամբ հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին:
4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից և խախտումները վերացնելու պարտականությունից:
4.8. Տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտականությունից:
4.9. Սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.10. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը լուծվում է՝
6.1.1. Եթե լուծարվել կամ վերակազմակերպվել կամ սնանկ են ճանաչվել Կատարողը, որը այդ դեպքերում պարտավոր է հատուցել Պատվիրատուի կատարած բոլոր ծախսերը.
6.1.2. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2017 թվականը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 16.12.2016թ.-ից մինչև 15.12.2017 թվականը ծագած հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ Պայմանագրի 2.3.7. կետի:
7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում Պատվիրատուն կարող է միակողմանի լուծել սույն Պայմանագիրը:
7.3. Սույն պայմանագրի փոփոխման և/կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:
7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
7.6.Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային

տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:
7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ՀՀ ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:
7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ:

VIIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝	Կատարող՝
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Կապան Բաղաբերդ 48 շենք
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ ՎՏԲ Հայաստան ք.Կապան
Բանկային հաշիվ՝ 900011105013	Բանկային հաշիվ՝ 160224578015
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 09407988
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝Վ.Հակոբյան	Սյունիքի մարզի <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի տնօրեն Ա. Վարդանյան
---------- (ստորագրություն)	Digitally signed by VARDANYAN ARARAT 3605580025 Date: 2017.02.28 14:32:53 AMT ---------- (ստորագրություն)
09,,02 ,, 2017 թ.	09,, 02 ,, 2017 թ.
Հեռ: Ֆաքս E-mail: info@moh.am	Հեռ. 028553712 Ֆաքս E-mail: srpndisp@yahoo.com

Հավելված 3
ՀՀԱՆՊԱԳ-ԾՁԲ-05570000
պայմանագրի

Ծառայությունների մատուցման պայմաններ

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանները	Կատարողի պատասխանատվությունը
Գլուխ Ա. Հիվանդանոցային Բուժօգնություն Պետպատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալները ընդգրկում են բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը՝ այդ թվում.	
1. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու ընդունման, վարման և դուրս գրման հետ կապված փաստաթղթային ձևակերպումները նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևերով և կարգով վարումը,	1-ին կետում նշված փաստաթղթային ձևակերպումները օրենսդրորեն սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 5000 դրամի չափով:
2. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների ամբողջ ծավալով իրականացումը,	2-րդ կետում նշված լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների հաստատված ծավալները ամբողջովին կամ մասնակի չիրականացման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 20 000 դրամի չափով:
3. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ բոլոր դեղերի և բժշկական պարագաների ապահովումը՝ կազմակերպության միջոցների հաշվին, ընդ որում՝ առանձին դեպքերում բուժումը բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու կողմից ձեռք	3-րդ կետում նշված կարգի խախտման դեպքում, այդ թվում՝ եթե հիվանդանոցում դեղերի առկայության պարագայում տվյալ դեղը ապահովվել է բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու կողմից,

բերված դեղերով թույլատրվում է կազմակերպել միայն բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու գրավոր համաձայնությամբ, հիվանդության պատմագրի մեջ ձևակերպված հիմնավորվածությամբ և բժշկական կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի թույլտվությամբ:	կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը: Հիվանդների բուժման համար ծախսված դեղերի տեսականու առնվազն 75%-ը չապահովելու դեպքում տվյալ դեպքը փոխհատուցման չի ընդունվում:*
4. պետական պատվերի շրջանակներում բուժվող բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու համար վճարովի հարբժշկական ծառայության (օրինակ՝ տեսակցության վճար, խնամողի համար նախատեսված վճարումներ, լրացուցիչ հարմարություններով հիվանդասենյակի համար վճար և այլն) մատուցման դեպքում ծառայության տվյալ տեսակի համար պետք է գործի նաև անվճար այլընտրանքային տարբերակը:	4-րդ կետով սահմանված պահանջները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում տվյալ դեպքի ամբողջ գումարի 20%-ի չափով:
5. պետական պատվերով բուժման իրավունք ունեցող պացիենտների բժշկական օգնության իրականացումը համաձայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. N318-Ն որոշմամբ հաստատված «Բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորնած անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգ»-ի պահանջների համաձայն:	5-րդ կետով սահմանված պահանջների խախտման դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում տվյալ դեպքի ամբողջ գումարի 25%-ի չափով:
6. բուժօգնության գործընթացի մշտադիտարկում իրականացնող պատվիրատուի մասնագետների համար աշխատանքային պայմաններ ստեղծել, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում, ժամանակին տրամադրել բուժօգնության կազմակերպման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը:	6-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում կիրառվում է տուգանք պայմանագրի գնի 0,5 տոկոսի չափով:
Գլուխ Բ. Արտահիվանդանոցային Բուժօգնություն Պետպատվերի շրջանակներում անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալները	

ընդգրկում են առողջության առաջնային պահպանման ամբողջ ծավալը՝ այդ թվում.	
1. ՀՀ ԱՆ համապատասխան չափորոշիչներով հաստատված՝ առողջության առաջնային պահպանման բժիշկների, նեղ մասնագիտացված բուժօգնություն իրականացնող բժիշկների և դիսպանսերային կաբինետների բժիշկների կողմից բժշկական օգնության և սպասարկման ծավալների կատարումը,	1-ին կետում նշված պայմանները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով: **
2. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունները իրականացումը ՀՀ ԱՆ համապատասխան չափորոշիչներով հաստատված ամբողջ ծավալով,	2-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով:
3.հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրման իրականացումը ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն,	3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 5000 դրամի չափով:
4. հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը ապահովել ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն,	4-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 1000 դրամի չափով:
5. անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերի տրամադրման իրականացումը ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն,	5-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով:
6.նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգերի համաձայն բնակիչների գրանցման, հաշվառման և վարման հետ	6-րդ կետում նշված փաստաթղթային ձևակերպումները սահմանված կարգով չկատարելու

կապված փաստաթղթային ձևակերպումների իրականացումը,	կամ թերի կատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում յուրաքանչյուր դեպքի համար 500 դրամի չափով:
7.ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումների (մատյաններ, դեղատոմսեր, պահանջագրեր և այլ փաստաթղթեր) իրականացումը:	7-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 100 000 դրամի չափով:
8. ըստ գործունեության ցուցանիշների խրախուսական ֆինանսավորման ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացումը ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն:	8-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում՝ ա. կատարողականից կատարվում է նվազեցում փոխհատուցման ներկայացված յուրաքանչյուր չհիմնավորված (փաստացի չկատարված կամ սահմանված կարգի խախտմամբ կատարված) հետազոտության արժեքի 150 տոկոսի չափով: բ. համապատասխան ցուցանիշի կատարման խրախուսական վարձատրման նպատակով փոխհատուցման ներկայացված և ստուգումների արդյունքում հայտնաբերված սխալ յուրաքանչյուր ծառայության կամ միջոցառման կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով:
9. սոցիալական փաթեթի շահառուների պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթով նախատեսված հետազոտությունները և մասնագետների խորհրդատվությունների իրականացումը ամբողջ ծավալով՝ ՀՀ ԱՆ 2015թ. օգոստոսի 18-ի N 05-Ն հրամանով սահմանված կարգով:	9-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում ա. կատարողականից կատարվում է նվազեցում փոխհատուցման ներկայացված յուրաքանչյուր պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթի արժեքի չափով: բ. փաստացի կատարված, սակայն արդյունքում հայտնաբերված խնդիրների առկայության դեպքում

	սոցիալական փաթեթի շահառուի հետագա բուժումը չկազմակերպելու, անհրաժեշտ այլ հետազոտությունների կամ նեղ մասնագետների խորհրդատվության, կամ անհրաժեշտության դեպքում համապատասխան կարգով հիվանդանոցային բուժօգնության չուղեգրելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում փոխհատուցման ներկայացված յուրաքանչյուր պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթի արժեքի չափով:
Գլուխ Գ. Անվճար շտապ բժշկական օգնության և սպասարկումը ընդգրկում է կանչի ապահովման և բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, այդ թվում.	
1. կանչերի ընդունման, վարման և լրացման հետ կապված փաստաթղթային ձևակերպումների իրականացումը ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգերի համաձայն,	1-ին կետում նշված փաստաթղթային ձևակերպումները սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով:
2. բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղերով և բժշկական նշանակության առարկաներով ապահովման իրականացումը ամբողջ ծավալով,	2-րդ կետում նշված պարտավորությունները խախտելու դեպքում դեպքը փոխհատուցման ենթակա չէ:
3. ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումները (մատյաններ, պահանջագրեր և այլ փաստաթղթեր):	3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 100 000 դրամի չափով:
Գլուխ Դ. Անվճար ստոմատոլոգիական մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման ծավալները ընդգրկում են բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ	

միջոցների ամբողջ ծավալը՝ այդ թվում.	
1. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու ընդունման, վարման և դուրս գրման հետ կապված փաստաթղթային ձևակերպումների իրականացումը նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևերով և կարգով,	1-ին կետում նշված ձևակերպումները ՀՀ ԱՆ կողմից սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 500 դրամի չափով:
2. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների ամբողջ ծավալով իրականացումը,	2-րդ կետում նշված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների հաստատված ծավալները ամբողջովին կամ մասնակի չիրականացման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 2 000 դրամի չափով:
3. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ դեղերով, նյութերով և պարագաներով ապահովումը:	3-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 2 000 դրամի չափով:
4. ՀՀ ԱՆ կողմից հաստատված կարգի համաձայն դեղերի ստացման, պահպանման, լրացման և հատկացման փաստաթղթային ձևակերպումները (մատյաններ, պահանջագրեր և այլ փաստաթղթեր):	4-րդ կետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում կատարողականից կատարվում է նվազեցում 50 000 դրամի չափով:

Սույն դրույթներում նախատեսված պարտավորությունների խախտումների կրկնման դեպքում Պատվիրատուի կողմից ամբողջությամբ (կամ տվյալ ծառայության մասով) միակողմանի կարող է լուծվել պայմանագիրը և/կամ առաջարկություն ներկայացվել համապատասխան իրավասու անձին Կատարողի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ:

* Բացառությամբ օնկոլոգիական և օնկոհեմատոլոգիական հիվանդությունների:

** Թերի կատարված ծավալների ցուցանիշները հաշվի են առնվում նաև խրախուսական (բոնուսային) փոխհատուցման հաշվարկի ժամանակ:

Պատվիրատու	Կատարող
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Հակոբյան	<<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի տնօրեն Ա. Վարդանյան
_____ (ստորագրություն)	Digitally signed by VARDANYAN ARARAT 3605580025 Date: 2017.02.28 14:34:34 AMT _____ (ստորագրություն)
09 փետրվար 2017թ..	09 փետրվար 2017 թ

Հավելված 4
ՀՀԱՆՊԱԳ-ԾՁԲ-05570000
պայմանագրի

ՑԱՆԿ

իրավական ակտերով սահմանված կատարողի կողմից պատվիրատուին ներկայացվող հաշվետվությունների

1.Յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը՝	1) ՀՀ առողջապահության նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» հաշվետվությունը /Ձև N 0001/, 2) ՀՀ առողջապահության նախարարի 09.04.2004թ-ի N 346 հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում իրականացվող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների վերաբերյալ» հաշվետվությունը /Ձև N 0002/, 3) ՀՀ առողջապահության նախարարի 27.07.2011թ-ի N 1456-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար ստոմատոլոգիական բժշկական օգնության ծավալների» հաշվետվությունը /Ձև 003/, 4) ՀՀ առողջապահության նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /ՁևN HP_011/, 5) գրանցված բնակչության տվյալների էլեկտրոնային շտեմարանից արտածված՝ ՀՀ առողջապահության նախարարի 18.01.2007թ-ի N 57-Ն հրամանով հաստատված «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրությունը վավերացնող գրանցման ձև»-ը /Ձև 004/ և գրանցված բնակչության տարիքասեռային կազմի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը /Ձև ER_001/:
2. Յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը՝	1) ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2014թ-ի N 3072-Ա հրամանով հաստատված՝ Անվճար Բուժօգնության համար դիմած քաղաքացիների հերթագրման վերաբերյալ հաշվետվությունը:

3. Յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝	1) ՀՀ առողջապահության նախարարի 26.10.2011թ-ի N2100-Ա հրամանով հաստատված «ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման» հաշվետվությունը /Ձև N002/, 2) ՀՀ առողջապահության նախարարի 03.05.2010թ-ի N 695-Ա հրամանով հաստատված «Ամփոփ հաշվետվություն ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության ձևը /Ձև N EN 009/:
4. Յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը ՀՀ կառավարության 28.07.2011թ. №1058-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվությունը»՝ աճողական կարգով /Ձև 0003/:	
5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով հաստատված այլ հաշվետվություններ:	

Պատվիրատու	Կատարող
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Հակոբյան	<<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի տնօրեն Ա. Վարդանյան
_____ (ստորագրություն)	Digitally signed by VARDANYAN ARARAT 3605580025 Date: 2017.02.28 14:35:17 AMT _____ (ստորագրություն)
09.02.2017 թ..	09.02.2017 թ..

Հավելված 6
ՀՀԱՆՊԱԳ-ԾՁԲ-05570000
պայմանագրի

Պայմանագրային գումարի կատարման ամսական համամասնություններ*

Բաժին/խումբ/դաս/ծրագիր	Ծրագրի անվանումը	2017թ պայմանագրային գումարի կատարման ամսական համամասնություններ ըստ ամսիների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	տարի ընդամենը
02.01.01	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	75.00%	83.33%	91.67%	100%	100%
07.02.02.01	Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.02.02	Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.02.03	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	75.00%	83.33%	91.67%	100%	100%
07.02.02.05	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.02.06	Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	75.00%	83.33%	91.67%	100%	100%
07.02.02.07	Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.03.01	Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.03.02	Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.04.01	Շտապ բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%

07.02.04.02	Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.02.04.03	Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ	25.00%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100.00 %	100%	100%
07.03.01.01	Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.01.02	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.01.03	Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.01.04	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.01	Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.02	Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.03	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.04	Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.05	Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.06	Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.07	Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.08	Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.02.09	Սրտի վիրահատության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.03.01	Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%

07.03.03.02	Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.03.03	Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.03.03.04	Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%
07.06.01.02	Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ	20.83%	29.17%	37.50%	45.83%	54.17%	62.50%	70.83%	79.17%	87.50%	95.83%	100%	100%

*/ Տոկոսները ներկայացված են աճողական կարգով

Վճարման ժամանակացույց*

Բաժին/խումբ/դաս/ծրագիր	Ծրագրի անվանումը	2017թ նախատեսվում է ֆինանսավորել ըստ ամսիների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	տարի ընդամենը
07.02.01.01	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	11.14%	16.71%	25.04%	33.38%	41.71%	50.04%	58.38%	66.71%	75.03%	83.35%	100%	100%
07.02.02.01	Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%
07.02.02.02	Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.02.02.03	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.66%	75.00%	83.33%	100%	100%
07.02.02.05	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%
07.02.02.06	Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	75.00%	83.33%	100%	100%
07.02.02.07	Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%

07.02.03.01	Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	6.17%	9.25%	17.19%	25.12%	33.05%	40.98%	48.92%	56.85%	69.18%	81.51%	100%	100%
07.02.03.02	Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ	3.33%	5.00%	11.67%	18.33%	25.00%	33.33%	41.67%	50.00%	64.29%	78.57%	100%	100%
07.02.04.01	Շտապ բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.02.04.02	Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%
07.02.04.03	Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.31%	36.62%	44.93%	51.43%	57.94%	64.44%	74.60%	84.76%	100%	100%
07.03.01.01	Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.01.02	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.01.03	Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.01.04	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	11.11%	16.67%	23.67%	30.67%	37.67%	46.00%	54.33%	62.67%	73.33%	84.00%	100%	100%
07.03.02.01	Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	27.67%	35.33%	43.00%	51.33%	59.67%	68.00%	77.14%	86.29%	100%	100%
07.03.02.02	Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	27.67%	35.33%	43.00%	51.33%	59.67%	68.00%	77.14%	86.29%	100%	100%
07.03.02.03	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.02.04	Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.02.05	Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն	13.33%	20.00%	26.67%	33.33%	40.00%	47.86%	55.72%	63.58%	73.98%	84.39%	100%	100%
07.03.02.06	Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.02.07	Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%

07.03.02.08	Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	28.57%	57.14%	100%	100%
07.03.02.09	Սրտի վիրահատության ծառայություններ	13.33%	20.00%	28.33%	36.67%	45.00%	53.33%	61.67%	70.00%	78.57%	87.14%	100%	100%
07.03.03.01	Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	13.33%	20.00%	27.67%	35.33%	43.00%	51.33%	59.67%	68.00%	77.14%	86.29%	100%	100%
07.03.03.02	Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%
07.03.03.03	Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	12.92%	19.38%	27.71%	36.04%	44.38%	52.71%	61.04%	69.38%	78.13%	86.88%	100%	100%
07.03.03.04	Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ	3.33%	5.00%	11.67%	18.33%	25.00%	33.33%	41.67%	50.00%	64.29%	78.57%	100%	100%
07.06.01.02	Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ	11.11%	16.67%	25.00%	33.33%	41.67%	50.00%	58.33%	66.67%	76.19%	85.71%	100%	100%

*/ Տոկոսները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու
ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
Վ.Հակոբյան

09.02.2017թ

Կատարող Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Վարդանյան

09.02.2017թ

Digitally signed by VARDANYAN ARARAT 3605580025
Date: 2017.02.28 14:39:16 AMT